


Թեան մէջ խարխափի և պատահականութիւնների գերի դառնայ:

Հիմն մի երկու խօսք մեր ուսուցիչներին և վարժուհիներին: Այլ ևս կասկած չիւայ, որ ձեր ջերմեռանդ աշխատութիւնը գրէթէ անօդուտ է կորչում. այլ ևս կասկած չիւայ, որ ձեր սանկիները իրանց պատկերազարդ այբբենարանները վերայ քիչ քիչ քուն են մտնում, զրկվելով իրանց նախկին աշխուժութիւնից և արթուն ուշիմութիւնից: Այդպէս տանջուած մանուկները ընտելանում են մտաց դանդաղութեան և այդ ցաւով տառապում են ոչ միայն ուսման առաջի տարին, այլ նրանք նոյն իող հետեւալ տարիները համար անպէտք են հանդիսանում, որովհետեւ ընտելանաբար զրկվում են ուսանելու ընդունակութիւնից: Թող ձեմարանի և ներսիսեան դպրոցի ուսուցիչները վկայեն, թէ իրանց գ. դասարանի համար ի՞նչպիսի աշակերտներ են հասուցանում ծխական ուսումնարանները: Այս բանի ճարը պէտք է դրանել, և այն ժամանակ մենք կունենանք «մանկավարժութեան նոր հոսանք»: Գործը ձեր գործակցութեամբ պէտք է կատարուի:

**Սեդրակ Մանդինեան**



## ՇԻՐՎԱՆՋԱԴԷԻ ՎԷՊԵՐԻ ՆԻԻԹԸ

### I

Կան հեղինակներ, որոնց դէմ հէնց առաջին օրերից ծառանում է հասարակութեան և նոյն իսկ զրական մարդկանց արհամարհանքը, հեղինակներ, որոնց բաժինը լինում է երկարատև անուշադրութիւնը և յաճախ էլ ծաղրող սուլոցը: Առաջին օրերից սրանք ստիպուած են լինում զենուելու հերոսական համբերութեամբ ու անգուլ աշխատասիրութեամբ. լուռ գործում են ու աւելի բարձր երկերի արտադրութեամբ արժանապէս ծառայում ընտրած ասպարէզին: Թէև ներկան նրանց թշնամին է հանդիսանում, բայց ապագայ տարիները լինում են նրանց դաշնակիցը: Փախք սերունդը տեսնում է նրանց կատարածը և ակնածութեամբ մատնանիչ է լինում այն տեղին, որին արժանի էին Այսպիսիների արեգարդ գլուխը և կնճռոտ ճակատը կիսանքի վերջալոյսին զարգարուած է լինում սարդենու ճիւղերով:

Գրողների այս տեսակին է պատկանում և Շիրվանդադէն: Քսանհինգամեայ զրական գործունէութեան ընթացքում մեծ մասամբ շատ ցած գնահատութիւն է լսել իւր մասին խօսողներից:

Սակայն վերջին երկու տարում երևում են նշաններ, որ ցոյց են տալիս, թէ հասել է ժամանակը, երբ նրա գրական գործունէութիւնը աւելի արժէքաւոր պէտք է նկատուի, քան նկատուել է մինչև այժմ:

Այս յօդուածի նպատակն է ընդհանուր գծերով պարզել Շիր-ւանդագէի գրական գործունէութեան մի կողմը միայն—նրա պերը հայ վիպագրութեան մէջ:

Մեզնում—ցաւօք սրտի պէտք է ասել, որ ոչ միայն մեզնում—գրականութեան զարգացումը նկարագրելիս ի նկատի չեն ունենում այն հանգամանքը, թէ հեղինակը իւր նիւթը սոցիալական ինչ շրջաններից է վերցնում: Շատերին թւում է, թէ ընտրութիւնը հեղինակի ցանկութիւնից է կախուած, մինչդեռ սա բոլորովին սխալ մի հասկացողութիւն է:

Շատ անգամ լսած կլինեք, թէ «Գրականութիւնը կեանքի հայելին է»: Այս խօսքը, որի միտքը քչերի համար է պարզ, իսկապէս մի ամբողջ գրական-պատմական թէորիա է պարունակում: Եթէ գրականութիւնը կեանքի հայելին է, միթէ նա կարող է ուրիշ բան ցոյց տալ, քան կեանքն է: Եւ որովհետև հայելու մեջի պատկերների փոփոխութիւնը հայելուց չէ կախուած, պարզ է, որ ով ուզում է այդ հայելու միջի պատկերների փոփոխութիւնը պատմագրել, նա պէտք է ոչ թէ հայելու մէջ վնասէ փոփոխութեան պատճառները, այլ կեանքի մէջ: Հեղինակը, որ հայելու մի մասն է, ազատ չէ արտացոլելի նիւթերի ընտրութեան մէջ: Բերենք օրինակներ:

Եթէ համեմատում ենք երկու ազգերի գրականութիւն, տեսնում ենք, որ սրանք ունեն տարբերութիւն, որը այնքան մեծ է թւում առաջին հայեացքից, որ աչքի չէ զարնում զարգացման ընդհանուր նմանութիւնը: Ռուս և հայ գրականութիւնները խիստ մեծ տարբերութիւն ունեն, բայց միթէ այս գրականութիւնների առանձնայատկութիւնների պատճառը ուսու և հայ գրողների ընդունակութիւնների զանազանութիւնն է: Պարզ է, որ ոչ Գրականութիւնների տարբերութեան պատճառը միջավայրերի տարբերութիւնն է: Ռուս միջավայրը հրամայաբար ստիպում է ուսու հեղինակին ուսական կեանքը պատկերացնել, իսկ հայ միջավայրը՝ հայ հեղինակին՝ հայկականը:

Երկրորդ, հասարակութիւնը անփոփոխ էութիւն չէ, այլ ժամանակի հոլովուելու հետ ունենում է զարգացման տարբեր աստիճաններ: Հասարակական զարգացումը ազդում է հեղինակի վրայ: Միթէ կարող էր Գոգոլը և Անդրէեի նիւթը մշակել իւր ժամանակ, իսկ վերջինս հնարաւորութիւն ունէր արտադրելու «Մեռած հոգիները» կամ «Վաղևի՛ կալուածատէրերը»: Եթէ Տուրգենևը

ապրէր 90-ական թուականներին, կարող էր գրել իւր «Հայեր ու որդիները», «Կորզը» (Корь) կամ «Օրամուտին» վէպը: Իսկ եթէ Չեխովը ապրէր Տուրգենևի ժամանակ, արդեօք կարժանանայինք *разночинец*-ների կեանքից վերցրած պատմուածքները կարդալու հաճոյքին: Ասածներից հետևում է, որ հասարակական զարգացման տարրեր աստիճանները խլում են հեղինակի ազատութիւնը, որ վերջինս նիւթ ընտրելիս ենթարկում է իւր ժամանակի ազդեցութեանը:

Երբորդ, այն ժամանակ, երբ ուսւ երկրի մեծ գրողը ստեղծագործում էր «Յարութիւն» վէպը, որ կրօնական վերածնութեան կոչ է պարունակում, նոյն ժամանակ Գորկին հրատարակում էր այն պատկերները, որ վերցրած էին սուսական լուծպենսպրոչեատրիատի կեանքից և կուռի հրաւէր էին կարգում: Դարձեալ հարց, կարող էին այդ հեղինակները նիւթերը փոխանակել: Ոչ, որովհետև հասարակական զարգացման նոյն աստիճանի վրայ գտնուելով հանդերձ նրանք սոցիալական տարրեր, խմբերի կեանքից էին վերցնում արտագրութիւնների նիւթը:

Եւ վերջապէս չորրորդ, նոյն իսկ միևնոյն դասակարգի կեանքը պատկերացնելը հեղինակներին չէ նոյնացնում, որովհետև նոյն դասակարգի զարգացման տարրեր աստիճանները տարբեր վերաբերմունք են թելադրում գրողներին: Այսպէս կոչուած նարոչնիկական գրականութիւնը իւր սկզբնաւորութեան ժամանակ բոլորովին ուրիշ կերպ է վերաբերում գիւղական ազգաբնակչութեանը, քան մի առ ժամանակ անցնելուց յետոյ:

Վերոյիշեալներն ի նկատի ունենալով կարելի է յանգել միայն այն եզրակացութեան, որ հասարակութեան տնտեսական սոցիալական զարգացումն է պատճառը, որ հեղինակը այս կամ այն նիւթն է ընտրում և այս կամ այն վերաբերմունքը ցոյց տալիս գէպի այդ նիւթը: Եւ գրականութեան գիտական պատմութիւնը գրելու գաղտնիքն հէնց այն է, որ նման աշխատանք գլուխ բերել ցանկացողը պէտք է տուեալ հասարակութեան տնտեսական ու սոցիալական զարգացումը և հեղինակների վերցրած նիւթն ու ցոյց տուած վերաբերմունքը պատճառի և հետևանքի յարաբերութեամբ կապակցէ: մի գաղտնիք, որ յայանի է սոցիոլոգիական նորադոյն գաղտնիքն աշակերտող իւրաքանչիւր «տղայի», իսկ ծածկուած է գրականութեան պատմութիւնը գրող «իմաստուններից ու գիտուններից»:

## II

Ասածներից հետևում է, որ ուսումնասիրութիւնը ճիշտ հողի վրայ դնելու համար անհրաժեշտ է ցոյց տալ, թէ ինչ շրջանից

էին վերցնում վէպերի նիւթը Շիրվանազէի նախորդները և ինչ չըջանից է վերցնում ինքը—այս հեղինակը:

Ռուսահայ առաջին վիպադիրը «Ա՛րք Հայաստանի» գրքում պատկերացրել է գիւղը և գիւղի մարդկանց: Գիւղական կեանքի իրական պատկերը տալով չէ թագցնում իւր վերաբերմունքը դէպի գիւղական իրականութիւնը: Հակադրելով գիւղը քաղաքին՝ վերագասում է առաջինը վերջինից: Արովեանի վէպի մի քանի յայտնի էջերի իւրաքանչիւր խօսքից երևում է նրա սէրը դէպի գիւղը և դժգոհութիւնը քաղաքից: Քանաքեռցի վիպասանը գիւղական կեանքը իդէալականացնում է և չէ նշմարում այնտեղ տեղական յատուկ թերութիւններ:

Արովեանի աշակերտը—Պետրեանը նոյնպէս պատկերացնում է համարեա բացառապէս գիւղական կեանքը: Նրա երկերից շատ քչի գործողութիւնը փոխադրում է քաղաք կամ կատարում է քաղաքում: Հերոսները համարեա բոլորը գիւղացիներ են: «Սօս և Վարդիթերի» հեղինակը Արովեանի աշակերտն է. ոչ միայն իւր վէպերի նիւթով, այլ և իւր՝ դէպի գիւղը ունեցած վերաբերմունքով: Սա էլ սիրահարուած է գիւղական կեանքին ու նահապետական կարգերին: Սակայն չպէտք է մոռանալ յիշել, որ իւր գրական գործունէութեան վերջին շրջանում (գլխաւորապէս «Ճեցեր») նկատում է, որ գիւղական կեանքը մի իդէալական աշխարհ չէ. այստեղ ևս կայ չարիք, զօրեղ չարիք, որը վրդովում է գիւղական կեանքի երանաւէտ անդորրութիւնը և թունաւորում երազական քաղցրութիւնը:

Երբ վէպի նիւթի տեսակէտից քննում ենք ռուսահայ երրորդ նշանաւոր վիպասանի—Բաֆֆու երկերը, նկատում ենք, որ նա բաւական առաջ է գնացել իւր երկու նախորդներից: Թէև Բաֆֆին էլ ունի գիւղական կեանքը նկարագրող գրուածքներ, բայց և այնպէս այս կարգի արտագրութիւնները նրա երկերի մի ճիւղը և փոքր մասն են կազմում: Նրա մեծ վէպերը նուիրուած են հայոց պատմական կեանքի մի քանի շրջանների նկարագրութեանը: Բացի սրանցից, Բաֆֆու գրական գործունէութիւնը նշանաւոր է վէպի նիւթի զարգացման տեսակէտից նրանով, որ ինչպէս ինքն էլ այդ լաւ գիտակցել է ու արտայայտել, նա է առաջին անգամ ամբողջական երկեր նուիրում քաղաքի կեանքին և մարդկանց: Թողնելով մի կողմ գեւ ևս «Փունջում» հրատարակած ծաղրական ոտանաւոր գրուածքները, որոնցով Ռ. Պատկանեանի պէս ծաղրում է ոտանաւորով քաղաքներում տարածուած կապիտէն շեւտեւոմը եւրոպական և ռուսական կուլտուրային, յիշենք նրա «Ոսկի աքաղաղը» և մանաւանդ «Զահրուժարը», որոնք ժամանակագրական կարգով առաջին նշանաւոր վէպերն են ոչ-գիւղական

կեանքից վերցրած: Բաֆֆու դէպի գիւղն ունեցած վերաբերմունքի համար պէտք է ասել, որ նա ջերմ համակրութեամբ է վերաբերում գիւղական անտեսութեանը և ազգաբնակչութեանը, միայն ցանկանում է, որ սրանք գինուեն և քրոպական տեխնիկայի և լուսաւորութեան գէնքերով, («կայծեր»—Մի գիւղ Ռչտունեաց լեռներում, «կենթ»—Վարդանի երազը և այլն): Իսկ իւր ժամանակուայ քաղաքին և քաղաքի ազգաբնակչութեանը շատ խէթ է նախում, որովհետև նրա նայիրոնալիստ հոգին վրդուում է տեսնելով ազգայնութեան անկումը այդ միջավայրում:

Եթէ ի նկատի շունենանք Նալբանդեանին («Մեռելահարցուկ») և մանաւանդ Ռ. Պատկանեանին (Նոր Նախիջևանի կեանքից վերցրած պատկերներ, որ գրուած են տեղական բարբառով), Բաֆֆուն պէտք է հառարենք նիւթի տեսակէտից վէպի նոր չրջանի—քաղաքային վէպի շկուայի հիմնադիր:

Այս ասելով չպէտք է ենթադրել, որ գիւղական վէպի դրսորոցը ընդհատում է իւր գոյութիւնը: Ոչ, նա նոյնպէս շարունակում է իւր գոյութիւնը, բայց այս դպրոցի հեղինակների վերաբերմունքը դէպի գիւղը շատ տարբեր է իրենց ուսուցիչների վերաբերմունքից:

### III

Բաֆֆու աշակերտն է Շիրվանդադէն:

Քաղաքի կեանքը, որին նուիրել էր Բաֆֆին իւր երկերի մի մասը, ընդգրկել է Շիրվանդադէի ամբողջ գրական գործունէութիւնը: Եթէ Աբովեանին և Շիրվանդադէին համեմատենք վէպի նիւթի տեսակէտից, իսկոյն աչքի կընկնի, որ սրանք կատարելապէս հակոտնեաներ են: Շիրվանդադէի համարեա բոլոր երկերի գործողութիւնների վայրը քաղաքն է: Փոքրիկ միջադէպերով միայն գործողութիւնը փոխադրում է գիւղ, այն էլ մի-երկու գրուածքներում: Եթէ պատահում են երբեմն և գիւղական դէմքեր, իրանք հանդէս են գալիս քաղաքի իրականութեան մէջ ու նրանից ազդուած կերպարանքով: Բացի մի քանի պատահական դէմքերից՝ միւս բոլոր հերոսները քաղաքում ապրած ու մեծացած անձնաւորութիւններ են: Սակաւ բացառութեամբ, նրա վէպերի նիւթը վերցրած է կովկասի երկու նշանաւոր արդիւնաբերական քաղաքների և գաւառական քաղաքներից էլ հեղինակի ծննդավայր Շամախու կեանքից:

Սակայն քաղաքի ազգաբնակչութիւնը միապաղաղ զանգուած չէ, այլ բաժանուած է մի քանի մեծ խմբերի, որոնք անտեսական տարբեր յարաբերութեան մէջ են միմեանց վերաբերմամբ:

Արդեօք այդ խմբերից, կամ աւելի ճիշտը, դասակարգերից, որք կեանքի հայելին են Շիրւանդաղէի վէպերը:

Վերեւում ասացինք, որ նա վէպերից վանել է գիւղական աղգարնակութիւնը: Անցնելով քաղաքի աղգարնակութեանը պէտք է շեշտենք, որ նրա վէպերի մէջ չնչին տեղ է բռնում, կամ համարեա հանդէս չէ գալիս մի ուրիշ խումբ—բանւորութիւնը:

Շիրվանդաղէն իւր գրուածքներում պատկերացրել է արհեստաւորին, գործակատարին, խեղճ ինտելիգենտին, արիստոկրատ ինտելիգենցեան, ծանր ու հզօր վաճառականին և խոշոր արդիւնաբերողին իրանց ընտանիքներով:

Հասարակական երկու մեծ խմբերի—գիւղացի և բանւոր դասակարգերի—վտարումը պարզ կերպով երևան է հանում «Բաօսի» հեղինակի գրական գործունէութեան դասակարգային բնոյթը:

IV

Քաղաքային կեանքը ստեղծում է քաղաքի վէպի շկոյաբայց արգեօք քաղաքի կեանքից նիւթ վերցնող վէպը էապէս, այսինքն հերոսների կենցաղով, ձգտումներով ու գաղափարներով տարբերում է այն վէպից, որ գիւղական կեանքն է պատկերացնում:

Նախ քան սրան պատասխանելը հարկաւոր է անցողակի կերպով գծել այն հոգեբանական տարբերութիւնները, որ կան գիւղի և քաղաքի մարդկանց մէջ:

Խօսքը «Անգլիայի քաղաքակրթութեան պատմութեան «հեղինակինն է:

Եթէ համեմատենք հասարակութեան տարբեր դասակարգերը,—ասում է Բոկլը,—կտեսնենք, որ նրանց մէջ սնահաւատութեան մեծ կամ փոքր չափով հանդէս գալը կախումն ունի այն հանգամանքից, թէ արդեօք այն երեոյթները, որոնց հետ շփումն ունեն այդ դասակարգերի մարդիկ, բացատրում են եղել բնական օրէնքներով թէ ոչ: Եթէ համեմատենք հողագործին մանուֆակտուրային արդիւնաբերողի հետ, ապա կնկատենք նոյն այս սկզբունքի երևան գալը: Հողագործը վարժում է գերբնական պատճառների ազդեցութեանը վերագրել այն երեոյթները (եղանակի փոփոխութիւններ, անձրև, կարկուտ ևլն. Թ. Ա.), որոնց հետ շփումն ունի: Եւ կասկած չկայ, որ սա մէկն է այն պատճառներից, որ սնահաւատ գաղափարները պահպանում են այդ դասակարգի մէջ գաղափարներ, որոնցով գիւղի բնակիչները այնպէս աննպաստ կերպով տարբերում են քաղաքի բնակիչներից: Մանուֆակտուրային արդիւնաբերողը և ընդհանրապէս քաղաքային արհեստով զբաղուող ամեն մարդ ունի այնպիսի պարագ-

մունքներ, որ կախումն ունեն նրա սեփական ընդունակութիւններին և կապուած չեն այնպիսի չքայտարուած երևոյթների հետ, որոնք յուզում են երկրագործի երեակայութիւնը: Ով իւր արուեստով մշակում է ուրիշներից ձեռք բերած հում նիւթը, նա անկասկած աւելի քիչ է ենթակայ մարդկանցից անկախ պատահականութիւններին, քան այն մարդը, որ ինքն է սկզբնապէս արտադրում հում նիւթը: Պարզ է եղանակը, թէ անձրեային, նաշարունակում է աշխատանքը նոյն յաջողութեամբ և վարժւում է յոյս գնել միայն իւր եռանդի ու ձեռքերի յաջողութեան վերայ: Հողագործը աւելի սնահաւատ է, քան արհեստաւորը, որովհետև նրա վրայ աւելի յաճախ և խիստ են ազդում այն երևոյթները, որ մարդկանցից ոմանք տգիտութեան պատճառով անուանում են քմահաճ (այսինքն պատճառականութեան օրէնքին չենթարկուող), իսկ ուրիշները նոյն պատճառով համարում են գերբնական\*):

Ուրեմն գիւղացու զբաղմունքը նրան դարձնում է սնահաւատ, իսկ քաղաքի բնակչին ոչ-սնահաւատ: Բոկլի այս միտքը զարգայնելով ու քննելով գիւղի և քաղաքի զբաղմունքների տարբերութիւնները, կտեսնենք այնպիսի հոգեբանական զանազանութիւններ, որոնք աւելի նշանակութիւն ունեն մեր առաջագրած հարցերը լուծելու համար:

Գիւղացին մի կտոր հաց ձեռք բերելու նպատակով ապրում է նոյն գիւղում, նոյն հասարակութեան մէջ, նոյն հողին կպած և նոյն գործիքներով: Մի խօսքով գործում է միշտ նոյն պայմանների մէջ, որոնք անփոփոխ են մնում երկար ժամանակ: Իսկ քաղաքի մարդը, մանաւանդ վաճառականը, անդադար փոփոխում է իւր տեղը, ընկնում է ամեն անգամ նոր պայմանների մէջ, որոնց միշտ ձգնում է յարմարուել նրա գիտակցութիւնը: Հացի խնդիրը վերջինիս ստիպում է լինել առաձգական և ճկուն: Ուրիշ խօսքով, գիւղացու զբաղմունքը նրան դարձնում է պահպանողական, ծայրայեղ աւանդապահ թէ արտադրութեան միջոցների և թէ անտեսական, հասարակական, բարոյական և այլ ըմբռնումների վերաբերմամբ: «Որովհետև այս բանը լաւ է եղել իմ հօր համար, ուրեմն լաւ է և ինձ համար», ասում է Չուսսա ցեղին պատկանող նեղրը\*\*): Նոյնը անդադար հաստատում է նաև գիւղացին թէ պրակտիկայով և թէ խօսքերով: Իսկ քաղաքացին կամաց կամաց ազատւում է գիւղից և կած իւր նախորդների աւանդապահութիւ-

\*) Вокль, «Исторія цивилизаціи въ Англіи» пер. Буйницкаго. Спб. 1893. стр. 156—157.

\*\*\*) Спенсеръ, «Основанія социологіи», СПб. 1876. стр. 79.

նից և չէ խորշում նորմուծութիւններից: Նա սկսում է քննաբար և ապա արհամարհաբար վերաբերուել հին կարգերին: Պատմութեան ընթացքում տեսնում ենք, որ քննադատութեան զէնքին յաջորդում է զէնքով քննադատութիւնը, փողփողում է ըմբոստութեան դրօշակը, և ծիւում են բարրիկազների շարքերը:

Տարբեր է անհատի զրութիւնը այդ երկու միջավայրում: Գիւղացին շատ աշխատանքներ ստիպուած է կատարելու կամ բուրբ և կամ մի քանի հարեանների աջակցութեամբ: Նա մեծ կարիք ունի ձրի ձեռնաուլթեան, առանց որի նրա աշխատանքի արդիւնքը կարող է ոչնչանալ: Փոխադարձ օգնութիւնը առօրեայ գործերում շատ մեծ աեզ է բնում գիւղական համայնքի մէջ: Ուստի իւրաքանչիւր գիւղացի աւելի և աւելի ձգտում է գործողութիւններով զրաւել իւր համայնակիցների խրախուսանքը և խուսափում է այնպիսի քայլերից, որոնք իրան կստիպէին ընդհարուել գիւղի հասարակական կարծիքին: Իսկ քաղաքում շրջապատողները ճնշում գործադրելու այնպիսի միջոցներ չունեն, ինչպէս գիւղում: Տնտեսական անկախութիւնը և անհատական նախաձեռնութեան անհրաժեշտութիւնը պատճառ են դառնում անհատականութեան զօրեղ զարգացման:

Անհատի զրութիւնը ընդհանրապէս համապատասխանում է և կնոջ զրութեանը: Մինչդեռ գիւղում նա մի իրաւազուրկ, անլիզու արարած է, քաղաքում, ընդհակառակը, աւելի ազատութիւն է վայելում և կամաց կամաց մարդկային արժանապատուութեան և տղամարդկանց հետ իրաւունքներով հաւասարուելու գիտակցութեան է գալիս:

կր շարունակուի Թ. Ա.

**ՉԵԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻԻՆԸ**

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

III

Չեւագիտական իմացութեան զարգացման աստիճանները անհասի եւ մարդկային ցեղի մէջ <sup>1)</sup>:

1) Առտիճան. առարկան երբ տիպական գաղափարն երբ ծագումը: Միջին քարեշրջանի մարդը կամ

4) Հմտ. P. Niehus Teuerungen in der Methodik des element Geometrieunterrichts.